№ 223 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 223

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎՃԱՐԸ 3 ՌՈՒԲԼԻ։

Հոկտեմբ. 1-ից մինչև նոյեմբ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 8, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԳ

Հինգշաբթի, հոկտեմբերի 12-ին, Մանթաշեան Առևտրական Դպրոցի շէնքի մէջ, Բօրսային կոմիտէտի դահլիճում (Բէհբութովսկայա փողոց) ՆՇԱՆԱԿՎԱԾ է մեծ խորհրդակցական ժողով՝ ուր պէտք է քննվի **ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆԴԷՍԻՆ** Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից մասնակցելու ձևի և Յոբելեանական Յանձնաժողով կազմելու խնդիրը։

Հրաւէրները անուանական են։ Ցանկացողները կարող են մուտքի տոմսակ ստանալ «Մշակի» խմբագրութեան մէջ, դիմելով Հ. Առաքելեանին։

2—1

(տա.)

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

1500-ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏԱՌԻ ԵՒ 400-ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Այսօրվանից վաճառվում են արտասահմանում պատրաստված Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, Ս. ՍԱՀԱԿ, Ս. ՄԵՍՐՈՊ, ՀԱՅՈՑ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԸ ՕԾԱԿԱՆՈՒՄ ընտիր պատկերները 1000 հատը (իւրաքանչիւր արկղում ամեն մի պատկերից 250-ական տեսակ) 1000 րուբլի, փոխանակ 1500 ր.։ Հրաւիրվում են ձեռնհաս հաստատութիւններ ձեռք բերել այդ պատկերները և տարածել հայ ընտանիքներում։

Առանձին-առանձին իւրաքանչիւրը 1 րուբլի 50 կոպ.։

Ամենապատեհ նուէր, որ հայութիւնը կարող է ինքն իրան անել՝ այդ նուիրական ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ չորս պատկերները և պճնազարդել դահլիճը։

Դիմել՝ БЮРО ПЕЧАТИ. ТИФЛИСЪ, Голов. пр. 41.

տա. 26. 5—5

ԾԽՈՂԸ ԳԻՏԷ ՀԱՄԸ
ԱՆԻ
ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ
10 հատը 6 կոպ.
25 հատը 15 կոպ.
Ակց. Ընկ. «ՄԻՐ» գործարանի։

(օ. մ.) տա. 738. 10—3

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
Ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնևմատօրակսով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Րտիշչևսկայա 10 (Լերմօնտովսկ. դեղատան դիմացը)։
(ա օ.) տա. 746. 100—4

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ՌԱԴԻՈ պրեպարատներով և էլեկտրականութեամբ։
Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դաւիդովսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա.օ.) տա. 699. 100—17

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա աղեքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։
(երեկ. ժ. 5—7-ը։
Միխայլովսկի պր. 86, տելեֆ. № 576.
(ե.հ.կ.) տա. 179. 100—41

ԲՌՆԱԾ ԴԻՐՔԵՐԸ

I

Եւրոպական պետութիւնները փոխադարձ համաձայնութեամբ բացասական դիրք են բռնել դէպի ներկայ պատերազմը։

— Ոչինչ չը պէտք է փոխվի Բալկանեան թերակղզում,—յայտարարել են պետութիւնները, — աշխարհագրական դրութիւնը պէտք է մնայ նոյնը։

Այդպէս է եւրոպական քաղաքագիտական այսօրվայ բանաձևը։

Status quo.

Եւրոպական պետութիւնները դէմ են ներկայ պատերազմին։ Այդ բաւական չէ։ Նրանք դէմ են և կռւող կողմերի ակնկալութիւններին։

Եթէ պետութիւնները ասէին կռւող կողմերին, թէ «պատերազմեցէք և ինքներդ ձեր հաշիւները ձեր սեփական ջանքերով մաքրեցէք», դա կը նշանակէր, որ պետութիւնները իրանք խուսափում են պատերազմից, բայց արգելք չեն լինում ուրիշների փորձերին՝ լուծելու իրանց կնճռոտ խնդիրները պատերազմով։

Պետութիւնները աւելի առաջ են գնում և ասում են պատերազմող կողմերին.

— Ձեր պատերազմը չէ կարող ոչինչ փոխել Բալկանեան թերակղզու աշխարհագրութեան մէջ։

Ուրեմն։

Ուրեմն պատերազմը անժամանակ սկսված, անխորհուրդ և աղէտաբեր մի գործողութիւն է։

Այդպէս է ասում եւրոպական դիպլօմատիան։

Եւ նոյնիսկ լսվում են սպառնական նախազգուշացումներ այն դէպքերի մասին, եթէ փորձեր կը լինեն աշխարհագրական փոփոխութիւններ մտցնելու։

Այդ նախազգուշացումներից մէկն է աւստրիական պետութեան յայտնածը։

Աւստրիան թոյլ չի տայ, որ Նօվօ-Բազարի սանջակը ընկնի սլաւօնական այս կամ այն պետութեան ձեռքը։ Նա այն ժամանակ ինքը կը շարժի իր զօրքերը և կը գրաւի այդ սանջակը։

Աւստրիան այդ սանջակի վերաբերութեամբ որոշ իրաւունք է վերապահում իր համար։ Նա այդ սանջակը զիջել է Թիւրքիային, երբ ստացել է Բօսնիան և Հերցեգօվինան։ Եւ նրա տէր համարում է Թիւրքիային, որը և կարող է իշխել այնտեղ, հակառակ դէպքում նա վերականգնած է համարում իր նախկին իրաւունքը։

Եւրոպական միւս պետութիւնները ակնկալութիւններ չեն ցոյց տալիս ներկայումս դէպի Թիւրքական հողերը և պնդում են ու կրկնում այն, որ Բալկանեան թերակղզին պէտք է մնայ այնպէս, ինչպէս նա եղել է պատերազմից առաջ։ Եւրոպան աշխարհագրական փոփոխութիւններ չէ ցանկանում և թոյլ չի տայ, որ լինեն այդպիսիները։ Նա կը պահանջի միայն բարենորոգումներ Եւրոպական Թիւրքիայի նահանգների համար։

Բայց պատերազմը կատակ չէ և չնչին պատահար չէ։ Նա ունի իր տրամաբանութիւնը, ունի իր թելադրանքները։ Պատերազմը կապված է շատ բարդ զգացումների հետ և նրա ազդեցութիւնը կարող է արտայայտվել աւելի ընդարձակ շրջաններում, քան կարելի է նախօրօք ենթադրել, հաշուել և սահմանափակել։

Պատերազմը սկսված է և շարունակվում է։ Պատերազմական բեմից եկող լուրերը հետաքրքրում են լայնածաւալ շրջանների մարդկանց, պատճառելով ուրախութիւններ և տրտմութիւններ։

Մենք կը խօսենք պատերազմի հետ կապված խնդիրների մասին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Հակառակ լրագիրներում երևացած տեղեկութիւնների, իբր թէ լուրջ տարաձայնութիւններ են ծագել մինիստրների խորհրդի նախագահի և արտաքին գործերի մինիստրի միջև, մենք լիազօրված ենք յայտնելու, որ այդ տեղեկութիւնը բոլորովին անհիմն է. ոչ մի տարաձայնութիւն ստատս սեկրետար Կոկօվցեվի և հօֆմէյստէր Սազօնովի միջև՝ ոչ բալկանեան դէպքերի հետ կապ ունեցող հարցերի, ոչ էլ ուրիշ որևէ խնդրի վերաբերութեամբ գոյութիւն չունի։

—

Վիլհելմսհաֆէն.—Ծովակալ Կոլինիի արձանի բացմանը Վիլհելմ կայսրը արտասանեց հետևեալ ճառը. «Կոլինին ոչ միայն պատերազմի հերոս էր, այլ և իր դաւանանքի ջերմ պաշտպան, որի համար և գովվեց իբրև հուգենոտների պարագլուխ։ Նա հաւատարիմ մնաց Ամենաբարձրեալին մինչև վերջին շունչը, ընկնելով Բարդուղիմէոսեան սոսկալի գիշերը, որ յաւիտենական ամօթով է արձանագրված քրիստոնեայ աշխարհի պատմութեան էջերում։ Թող Կոլինիի հաւատարմութիւնը օրինակ դառնայ մեզ՝ զինուորական գործի մարդկանցս, նաւատորմի ընկերներիս համար»։

—

Բեռլին.—Քաղաքը պատւեց ցուցահանդիսային կօնֆերենցիան խնճոյքով դեսպանների, մինիստրների, առևտրի, արդիւնաբերութեան, համալսարանի, մամուլի ներկայացուցիչների ներկայութեամբ։ Աւագ-քաղաքագլուխ Վէրմօտը խմեց կօնֆերենցիային մասնակցող պետութիւնների միապետների կենացը։

—

Չիկագօ.—Ռուզվէլտի առողջութիւնը լաւացաւ։

—

Մանիլա.—Սէբօ կղզու վրայով անցաւ տայֆուն։ Զոհվեցին մօտ 400 մարդ։ Քանդվեցին 400 տուն, ոչնչացաւ ամբողջ բերքը. ջարդվեցին բազմաթիւ նաւեր. Վնասը 10 միլիօն դոլլար է։

Լէյդ կղզու վրա ոչնչացաւ շաքարեղէգնի ամբողջ տարածութիւնը, քանդվեցին շատ կացարաններ։ Շատ ընտանիքներ զրկվեցին ապրուստից։ Վնասը մի միլիօն դոլլար է։

—

Բուխարէստ.—Մինիստրական ճգնաժամը վերջանում է։

ԹԻՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 հոկտեմբերի

Ուշի.—Այստեղ ստորագրված հաշտութեան պայմանագիրը պարունակում է 11 յօդուած։ Իտալացի և թիւրք լիազօրները պարտաւորվում են իրանց կառավարութիւնների կողմից անյապաղ պայմանագիրը ստորագրելուց յետոյ դադարեցնել պատերազմական գործողութիւնները և հրաման արձակել զօրքերին և քաղաքացիական պաշտօնեաներին յետ կանչելու մասին։

Իտալացիք Եգէյեան կղզիներից կը հեռանան, հէնց որ Թիւրքիան կը հեռացնէ իր զօրքերը Կիրենաիկիից և Տրիպօլիսից։ Մինչև պատերազմը կնքված բոլոր պայմանագրերը և համաձայնութիւնները նորից մտնում են իրանց ուժի մէջ։ Իտալիան պատրաստակամութիւն է յայտնում Թիւրքիային տալ լիակատար տնտեսական անկախութիւն, չը կապելով նրան զանազան պայմանաթղթերով։ Իտալիան համաձայն է, որ Թիւրքիան մաքսային տուրքերը 11%-ից դարձնէ 15%-ի. Իտալիան պարտաւորվում է վերացնել իր պօստային հաստատութիւնները Թիւրքիայում։ Իտալիան պարտաւորվում է ամեն տարի վճարել Թիւրքիային ոչ պակաս 2 միլիօն լիրից։

—

Հռոմ.—Տեղս եկած իտալացի պատգամաւորները մինիստր-նախագահին յանձնեցին խաղաղ պայմանագրի իսկականը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 հոկտեմբերի

Թէհրան.—Սալար-ուդ-Դովլէն 1500 ձիաւորներով սպառնում է մայրաքաղաքին։ Կառավարութիւնը ձեռք է առնում քաղաքը պաշտպանելու միջոցներ։ Սալարի գտնվելու տեղը ճիշդ յայտնի չէ։ Կառավարութիւնը յոյս ունի, որ Սալար-ուդ-Դովլէի հարցը կը լուծվի խաղաղ ճանապարհով։

—

7 հոկտեմբերի

Թէհրան.—Վերջին տեղեկութիւնների համաձայն Սալար-ուդ-Դովլէն գտնվում է իր Մէրդանաբադ կալուածքում՝ Թէհրանից 40 վերստ հեռու։ Սալար-ուդ-Դովլէն Թէհրանի վրա գալու դէպքում քաղաքի պաշտպանութիւնը կը յանձնվի բախտիարներին։

—

Խօյ.—Պարսից սահմանը՝ Նավուր գիւղը՝ Մակուի Զալդրանի դիմաց եկաւ 800 մարդուց բաղկացած թիւրքական մի զօրամաս Ջևդէդ-բէյի հրամանատարութեամբ։ Զօրամասը մտադիր է անցնել սահմանը Մակու փախած քիւրդ պարագլուխ Սէյիդ-բէյին բռնելու համար։ Մակուի քիւրդերը և ձիաւորները կենտրօնանում են Զալդրանում թիւրքաց կանօնաւոր զօրքերի դիմաց։

—

Թէհրան.—Օտարազգի ներկայացուցիչները իրազեկ եղան, որ Թէհրանում յայտարարվել է պատերազմական դրութիւն։

Կարգուկանոնը մայրաքաղաքում լիակատար է։ Քաղաքային բոլոր դռների մօտ դրված են բախտիարներ. կան նաև թնդանօթներ։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

6 հոկտեմբերի

Կ. Պօլիս.—400 ալբան ուսանող նախկին յեղափոխական Դերվիշի առաջնորդութեամբ մեկնում են յունաց սահմանագլուխը։

Ներկայումս բօլգարների հետ կռիւ է Տօմրալի շրջանում։ Բօլգարները հեռանալով լեռնային բարձունքներից՝ յետ են քաշվում իրանց դիրքերը։

Բալկանեան պետութիւնների դեսպաններին մեկնելու ժամանակ նաւահանգիստ ճանապարհ դրին ռուսաց դեսպանատան առաջին թարգմանը և դիպլօմատիական մարմնի մնացած ներկայացուցիչները։ Բօլգարական դեսպան Սարաֆօվը Պետ. Հեռ. Գործ. թղթակցին ասաց, որ մեկնում է ուրախ և հաստատ հաւատում է յաղթութեանը։

Թիւրքաց նաւատորմը ծով մտաւ բօլգարական նաւահանգիստները ռմբակոծելու համար։ Թիւրքիան այժմ, Իտալիայի հետ հաշտութիւն կնքելուց յետոյ, յոյս ունի, որ իտալական ռազմանաւերը իրանց պաշտպանութեան տակ կառնեն Արշիպէլագոսի կղզիները, ուստի և նա կարող կը լինի իր նաւատորմի մեծ մասը գործադրել Սև-Ծովի գործողութիւնների համար։

Յունաց դեսպանը յայտնեց արտաքին գործերի մինիստրին, որ Յունաստանը միանում է բալկանեան պետութիւնների ուլտիմատում-նօտային։ Սակայն Բ. Դուռը չէ տալիս անցագրերը, խնդրելով դեսպանին մնալ Կ. Պօլսում և ամեն ջանք գործ դնել անջատելու Յունաստանին դաշնակիցներից, դեսպանը ըստ երևոյթին կը մեկնէ։ Թիւրքերի ֆանատիկոսութիւնը այստեղ աւելի ու աւելի սաստկանում է։ Շատ հնարաւոր է, որ ցոյցեր տեղի ունենան եւրոպացիների դէմ։ Վերջինները կամենում են, որպէսզի ամեն մի դեսպանատուն պահանջէ ուղարկել մի-մի ռազմանաւ։

Պատերազմը սկսվեց բոլոր չորս ֆրօնտի վրա։ Կռիւներ են սկսվել Բօլգարիայի, Սերբիայի, Յունաստանի սահմանագլուխներում։

Տիեզերական պատրիարքը Բ. Դռնից թոյլտւութիւն է խնդրում նշանակել քահանաներ քրիստոնեայ զինուորների համար զօրանոցներում։

Մայրաքաղաքում բնակվող մի քանի բօլգար պրօֆէսօրները և դասատուները կալանաւորվել են և յանձնվում են զինուորական դատարանի։

Քաղաքային վարչութիւնը քննում է կենսական մթերքների պակասութեան դէմ միջոցներ ձեռք առնելու հարցը։

—

Աթէնք.—Մինիստր-Կօրօմիլասը յայտնեց պալատին պատերազմի յայտարարութեան մասին։ Բուռն ծափահարութիւններ։ Յունաց զօրքերն անցել են սահմանը, չը հանդիպելով դիմադրութեան։ Ծովային մինիստրը զեկուցեց, որ նաւատորմը ծով է մտել թիւրքական նաւատորմին հանդիպելու յոյսով։

—

Պօդգօրիցա.—Սամիմ-բէյը 2000 առնաուտներով փութանակի դիմեց Բէրանի վրա քաղաքը յետ վերցնելու նպատակով, սակայն ընկաւ ծուղակի մէջ, որ կազմել էր չերնօգօրցիների հիւսիսային զօրամասը։ Ամբողջ թիւրքական զօրախումբը ոչնչացաւ։ 280 հոգի ընկան գերիներ։

Սկիւտարի դէմ շարունակվում են պատրաստութիւններ տեսնվել. Սկիւտար մեկնեց գահաժառանգը։

Այսօր 21 թնդանօթներով ողջունվեց պատերազմի յայտարարութիւնը, որ մեծ ոգևորութիւն է առաջ բերել ամբողջ երկրում, ինչպէս և զօրքի մէջ։

—

Սօֆիա.—Առաւօտեան Ֆէրդինանդ թագաւորը Հին-Զագօրում կարդաց իր հրովարտակը։

Բօլգարական զօրքերը գրաւեցին թիւրքաց ռազմական Կուրտալ-կալէ դիրքը՝ Մուստաֆա-փաշայի մօտերը։

Գեշօվը դիմեց Յունաստանի, Սերբիայի և Չերնօգօրիայի մինիստր պրեզիդենտներին հեռագրով, թէ Սօֆիայի միտրոպոլիտը ջերմ աղօթքներ է վերառաքել չորս դաշնակից միապետների և Թագաւոր Կայսրի համար, ինչպէս նաև չորս զօրաբանակներին աջողութիւն տալու համար։

—

Բելգրադ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ սերբիական առաջապահ գնդերի Պրիշտինի վրա յարձակվելու տեղեկութիւնները սխալ են։ Թիւրքերը շատ կամուրջներ են քանդել Սանջակում։ Բէլեանօվսկայա կարևոր կամուրջը ընկել է սերբերի ձեռքը։

—

Սէրաէվօ.—Միացեալ մահմեդական կազմակերպութիւնների օրգան «Զէմանը» խիստ յօդուած է տպել դաշնակից բալկանեան պետութիւնների դէմ։ Լրագրի ասելով, ներկայ պատերազմում մահմեդականները տեսնում են խաչակրաց արշաւանքների վերսկսումը և պատրաստ են հանդէս գալ ի պաշտպանութիւն իսլամի։

—

Բեռլին.—Գերմանական Կարմիր Խաչը Թիւրքիա ուղարկեց 22 գթութեան քոյրերի մի գլխաւոր բժշկի հետ։

—

Բելգրադ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ առ. ժամը 6-ին սերբիական զօրքերը ամբողջ ֆրօնտով անցել են սահմանը։

7 հոկտեմբերի

Կ. Պօլիս.—Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Տուզիի գրաւումը չերնոգօրցիներից մեծ նշանակութիւն չունէր։ Չերնոգօրցիք քաղաքը վերցրին շնորհիւ մալիսօրների դաւաճանութեան։

Բօլգարները մօտեցան Մալկօչին, բայց յետ քաշուեցին։ Թիւրքերը գրաւել են ռազմական կէտեր։

Նախկին պատգամաւոր Հասանը Պրիշտինում կազմել է 1000 ալբաններից զօրախումբ սերբերի դէմ կռուելու համար։

Թիւրքերը գրաւել են սերբիական բլօկհաուզը Զարիի մօտերը։

Նազըմ-փաշան արձակեց հետեւեալ հրամանը զօրքին. «Երբէք բոպէն այնքան լուրջ չէ եղել, ինչպէս այժմ։ Բալկանեան երկիրները խախտում են իրաւունքն ու արդարութիւնը, անտես են առնում մեծ պետութիւնների խորհուրդները։ Օֆիցէրներ և զինուորներ. ձեզ վրա պարտականութիւն է դրված վրէժխնդիր լինել ամօթանքի համար և ապացուցել աշխարհին, որ ձեր նախնիների քաջագործութիւնն ու փառքը անցել է նրանց յաջորդներին։ Ձեր նախնիքները, անցնելով Անատօլիայից Ռումելիա, նուաճեցին ընդարձակ երկիրներ. Նրանց յաջորդները իրանց հերթին կը պաշտպանեն այդ երկիրները։ Խիստ դաս տուէք թշնամիներին։ Դուք պաշտպանում էք սրբազան գործ. Մի թափէք արիւն ի զուր տեղը, խիստ մի լինէք կանանց, երեխաների և գերիների հետ. պաշտպանեցէք ազգաբնակութեան կեանքն ու գոյքը, յարգեցէք կրօնը, ողորմած եղէք դէպի դժբաղդները, որոնք կռւում են հնազանդվելով իրանց գլխաւորներին։ Քաղաքակիրթ աշխարհի առաջ ապացուցէք, որ օսմանցիները կանգնած են միեւնոյն բարձրութեան վրա, ինչպէս ամենակուլտուրական ժողովուրդները։ Ընթանալով առաջ՝ գիտցէք, որ Աստուծոյ օրհնութիւնը ձեզ հետ է»։

(Պաշտօնական)։ Թիւրքաց ռազմի նաւատորմը, հանդիպելով բօլգարական ականանաւերին Վառնայի մօտ, ստիպեց նրանց վերադառնալ այդ նաւահանգիստը։

Թիւրքերը գրաւել են բօլգարական Խամաթէփէ բլօկհաուզը։

Սերբիական և բօլգարական սահմաններում ճակատամարտերը շարունակվում են։ Պրիշտինից դէպի հիւսիս, Պօդուէվօյի և Կուրմուշլիի միջև սկսվել է կատաղի կռիւ։

Զինուորական թղթակիցները մեկնում են երեքշաբթի օրը Ադրիանուպօլիս զինուորական գնացքով։ Նրանց մօտ նշանակված կօնդապետ Իզզէթը յայտնեց թղթակիցներին, որ նրանց ցոյց կը տրվի ամեն տեսակ աջակցութիւն։

Եկան 2 գերմանացի օդագնաց։

Բօլգարական սահմանագլխում կռիւը շարունակվում է 56 ժամ։

Օսմանեան կառավարութիւնը դիմեց մեծ պետութիւնների միսիաներին, տեղեկացնելով որ Թիւրքաց նաւատորմը հրաման ստացաւ ռմբակոծել և գրաւել Վառնա և Բուրգաս բերդերը. կառավարութիւնը խնդրում է տեղեկացնել շահագրգռված նաւագնաց ընկերութիւններին գրաւման մասին։

Օսմանեան գործակալութեան տեղեկութիւնների համաձայն՝ Պրիշտինի մօտերը օսմանեան զօրքերը յարձակվել են սերբիական 3 բատալիօնի վրա և ոչնչացրել են նրանցից մինին։

Թիւրքիան յայտնեց դեսպաններին, որ խիստպէս գրաւելու է բօլգարական նաւահանգիստները։

Պօդգօրիցա.—(Ճեպընթաց)։ Չերնոգօրական զօրքերը այսօր գրաւեցին Գուսինիէն։

Վառնա.—Առաւօտեան ժամը 7-ին բօլգարական 2 ականանաւ հանդիպեց Թիւրքական երկու զրահանաւերի ու 2 ականանաւի։ Թիւրքաց նաւատորմը կրակ բացեց արձակելով 60 գնդակ։ Բօլգարական ականանաւերը պատասխանեցին և հեռացան Վառնայի ջրերը։ Երեկոյեան դէմ Թիւրքաց նաւատորմը կանգ առաւ Էմինօգրադից 10 կիլօմետր, և Վառնայից 15 կիլօմետր հեռու։

Աթէնք.—Յօնիական ծովի նաւատորմի մի մասը գրաւեց Պրեվէզան։

Թեսալեան զօրքը առաջանալով դէպի Էլլասօն, ստացաւ օժանդակութիւն գահաժառանգի հրամանատարութեամբ։ Էֆիրի Թիւրքաց զօրքը, թւով 6000 մարդ, կենտրոնացել է Եանինայում։

Ամերիկական պանէլլենեան ընկերութիւնը մի շաբաթվայ մէջ հանգանակեց կէս միլիօն դօլլար Յունաստան վերադարձող 36,000 պահեստներին օգնելու համար։ 2000 պահեստներ վերադարձան սեփական միջոցներով։

Յունաց կառավարութիւնը պաշտօնապէս իրազեկ արեց մեծ պետութիւններին, որ Դօմէնիկայի և Արտայի միջև սկսվել է Թիւրքաց ծովափի նուաճողական գործողութիւնը։

Գեներալ շտաբի պետ գեներալ Դանգլին հեռագրում է, որ չորս ժամ տեւող կռւից յետոյ յունաց զօրքը յետ մղեց թշնամուն ամուր դիրքերից և գրաւեց Էլլասօն քաղաքը։ Գահաժառանգը անձամբ հրամանատար էր յունաց զօրքերին։ Կորուստներն աննշան են։ Էֆիրի զօրամասը գեներալ Սապունցակիսի հրամանատարութեամբ գրաւել է գրիմինիստը, ուր զօրքերին ցոյց են տուել թոյլ դիմադրութիւն։

Կրետական զօրքերը, թւով 2500 մարդ, գալով այստեղ, անմիջապէս մեկնեցին պատերազմի դաշտը։

Կիպրոսի արքեպիսկոպոսը մաղթանք կատարեց յունական զէնքի աջողութեան համար և ուղարկեց 400 ֆունտ ստերլինգ Կարմիր Խաչին։

Գէորգ թագաւորը յունաց զօրքերի սահմանն անցնելու առիթով ողջոյնի հեռագիր ուղարկեց դաշնակիցներին։ Բօլգարական մինիստր նախագահը պատասխան-հեռագրի մէջ ընդգծում է, որ բալկանեան դաշնակցութիւնը բղխեց Վէնիզէլօսից։

Հէլլենական զօրքերը գրաւեցին Էլլասօնի շրջակայքի բարձունքները։ Թիւրքերը նահանջում են Սէրֆիջէի կողմը։ Վճռական ճակատամարտ սպասվում է Սէրֆիջէի և Էլլասօնի միջև Սարանդօպօրի մօտերը։

Աթէնքի տաճարում յաղթութեան առիթով կայացած գոհաբանական մաղթանքին ներկայ էին Թագաւորը, մինիստրները, իտալական, բօլգարական և սերբիական դեսպանները։

Էլլասօնի ռմբակոծութիւնից յետոյ, յոյները երեք ժամեայ կռւով գրաւեցին քաղաքը։ Շրջակայ բլուրներից գրաւվեցին 7 թնդանօթ։

Տագանրօգ.—Կազմվեց յանձնաժողով բալկանեան սլաւօններին օգնելու համար։

Օդեսսա.—Առեւտրական շրջաններում հաղորդագրութիւն ստացվեց, թէ Դարդանէլը առեւտրական նաւերի անցուդարձի համար փոխանակ չորս անգամի օրը՝ բաց կը լինի միայն 2 անգամ։

Կ. Պօլիս.—12 յունական նաւ հացահատիկով թոյլտուութիւն ստացան անցնել Դարդանէլով։

Բերլին.—Որովհետև Թիւրքաց ծառայութեան մէջ գտնվող պրուսական օֆիցէրներին խստագոյնս արգելվեց մասնակցել պատերազմին, մի քանի օֆիցէր խնդրագիր ներկայացրին Գերմանիայում ծառայութիւնից հեռացնելու մասին։

Սօֆիա.—Բօլգարները գրաւել են սահմանային շրջանը համարեա առանց կորուստների։ Թիւրքերը նահանջում են երկրի խորքը։ Արշաւանքը շարունակվում է։

Լուրերի համաձայն, Մակեդօնիայում ազգաբնակութիւնը լայն պարտիզանական գործողութիւններ է սկսել։

Պետերբուրգ.—Ս. Յարութեան տաճարում ազգային միութեան տեղիս ճիւղի նախաձեռնութեամբ կատարվեց մաղթանք բալկանեան քրիստոնեայ պետութիւնների զօրքերի աջողութեան համար։

Յունաց դեսպանատան եկեղեցում կատարվեց մաղթանք պատերազմական գործողութիւնները սկսելու առիթով։

Բէլգրադ.—Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն՝ առաջին զօրաբանակը գահաժառանգ Ալէքսանդրի հրամանատարութեամբ անցաւ սահմանը Ռիստօվայի մօտ, գրաւեց երկաթուղային կայարանը և Զիբեվչէ գիւղը, արշաւում է դէպի Մօրավի հարաւ-արեւմտեան հովիտը։ Թիւրքաց զօրքերը ցիր ու ցան եղան։ Լրագիրների ասելով՝ գեներալ Եանկօվիչի 3-րդ զօրաբանակը արշաւում է դէպի Պրիշտինէ։ Կարելի է ենթադրել, որ երեք զօրաբանակները միանալու են Օվչէ դաշտի մօտ, ուր կը վճռվի Ուսկիւբի վիճակը։

Սօֆիա.—Ամբողջ թագաւորութեան մէջ կատարվեցին գոհաբանական մաղթանքներ բօլգար զէնքի աջողութեան համար։ Քաղաքում տիրում է մեծ կենդանութիւն։ Ժողովուրդը հոծ բազմութեամբ կարդում է Ֆերդինանդ թագաւորի հրովարտակը։

Օդեսսա.—Խէրսօնի արքեպիսկոպոս Դիմիտրիի նախագահութեամբ հաստատվում է յանձնաժողով ամբողջ Ռուսաստանում հանգանակութիւն անելու յօգուտ պատերազմում գործող Կարմիր Խաչի։

Փարիզ.—Արմատականների օրգանը գրում է. «Ռուսաց կառավարութիւնը ապացուցեց չափաւորութիւն և ներկայ կացութեան պարզ հասկացողութիւն։ Մենք յոյս ունենք, որ նա կարող կը լինի պաշտպանել խաղաղութեան գործը և եւրոպեան համաձայնութեան սկզբունքը պանիսլաւական պատրանքներից, պաշտպանելով այդպիսով ռուս ժողովրդի տնտեսական բարեկեցութիւնը ու պետական մեծութիւնը»։

Պետերբուրգ.—Սլաւօնական փոխադարձ օգնութեան ընկերութիւնը ի պատիւ բօլգարական ներքին գործերի մինիստր Լիւդսկանօվի ճաշ տուեց։ Բացի մինիստրից ներկայ էին բօլգարական հիւպատոսը, սերբիական պրօֆ. Կօչուտիչը, Դումայի նախկին նախագահ Խօմեակօվը, Գուչկօվը կնոջ հետ, կոմս Բօբրինսկի, Լեւոխէ և այլն։ Նախագահում էր Ստօլիպինը, որ բաժակ առաջարկեց հիւրի համար։ Լիւդսկանօվը պատասխան ճառի մէջ ակնարկ ձգեց սլաւօնական ազատագրութեան պատմութեան վրա, սկսած 1828 թւից. ընդգծեց, որ բօլգար սլաւօնները շարունակում են Ռուսաստանի սկսած գործը. սլաւօնները միացել են այնպէս, որ երբէք եղած չէ, և յոյս ունեն, որ իրանք իրանց կը յաղթեն պատերազմական դժուարութիւններին։ Նրանք օգնութիւն են սպասում Ռուսաստանից, երբ պատերազմից յետոյ սկսվեն դիւանագիտական դժուարութիւնները։ Լիւդսկանօվը ճառը աւարտեց խմելով Թագաւոր Կայսրի կենացը, որ ընդունվեց ազգային օրհներգով։ Յետոյ մի շարք ճառերի մէջ համակրանք յայտնվեց Ռուսաստանի բոլոր խաւերի կողմից դէպի բալկանեան հերոսական կռիւը։

Մօսկվա.—Մաղթանքից յետոյ կազմվեց սլաւօններին օգնող մասնաժողով, որին Սամարինը նուիրեց 3000 րուբլի։ Մասնաժողովը շնորհաւորական հեռագիր ուղարկեց կռւող բալկանեան քրիստոնեաների թագաւորներին։

ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Օդեսսայում հեռագիր ստացվեց, որ Թիւրքաց ռազմանաւերի գործողութիւնները Բօլգարիայի ծովափի դէմ արդէն սկսվել են։

Կ. Պօլսից հեռագրում են, որ վախենալով Թիւրքաց ֆանատիկոսութիւնից՝ Թիւրքիայից փախչում են հայ, յոյն և ռուս ընտանիքները։ Քրիստոնեաների ջարդը անխուսափելի է առանձնապէս երկրի խորքում։

Եւրոպական մեծ պետութիւնների կաբինէտները եռանդով քննում են Պուանկարէի յամառ առաջարկութիւնը կօնֆերէնցիա գումարելու պատերազմը խափանելու նպատակով։

Սերբիան հաւաստիացրեց Ռուսաստանին և Աւստրիային, որ նա ամեն միջոց ձեռք կառնէ, որպէսզի սերբիական զօրքերը ներս չը խուժեն Նօվօ Բազարի սանջակը։

Ցետինէից պաշտօնապէս հեռագրում են, որ մինչև հոկտ. 2-ը թիւրքերից և չերնոգօրցիներից սպանվել են 1442 հոգի։

Կօկօվցեվը պաշտօնապէս յայտնեց, որ մեծ պետութիւնները, ի թիւս որոց նաև Ռուսաստանը, ոչ մի կերպ չեն միջամտելու բալկանեան պատերազմին։

Չերնոգօրիան պատերազմում մինչև այժմ ձեռք է ձգել 4000 գերի թիւրքերի, որոնց կերակրելը, սակայն, շատ ծանր է առանց այն էլ աղքատ պետութեան համար։

Տարաբօշի մօտերը չերնոգօրցիների 1000 զինուորից բաղկացած զօրամասը չը լսեց հրամանատարին և յետ չը նահանջեց տրված ազդանշանից յետոյ։ Թիւրքերը բոլոր 1000 հոգուն էլ սրի քաշեցին։

Թիւրքիան շարունակում է զինել ալբաններին քրիստոնեաներով բնակված վիլայէթներում՝ ըստ երեւոյթին քրիստոնեաների ջարդեր յարուցանելու նպատակով։

«Իկդամը» կառավարութեան ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ զինուորական մինիստրութեան դիւանատան շուրջ շարունակ պտոյտ են անում սլաւօնական պետութիւնների թարգմանները. «Այդ թարգմանները,—ասում է աչալուրջ լրագիրը,—հետեւում են պատերազմական միջոցներին և կարող են իրանց կառավարութիւններին մատուցել շատ կարեւոր ծառայութիւն»։

Սան-Ստեֆանօյում Թիւրք զօրքերի մէջ անկարգութիւններ ծագեցին։

Թիւրքիան յետ է կանչում իր զօրքերին Ռուսաստանին սահմանակից Փոքր-Ասիայի տեղերից։ Այդ համարվում է վստահութեան ակտ դէպի Ռուսաստանը։

Գուչկօվը հերքում է Բօլգարիա գնալու լուրերը։

Ռուսաց դեսպան Գիրսը Կ. Պօլսում վստահեցրեց Նօրատունկեանին, որ Ռուսաստանը ներկայ պատերազմում չէզոք դիրք է բռնելու։

Օրէ-օր աճում են Կ. Պօլսում քրիստոնեաների հնարաւոր ջարդերի լուրերը։

Ցետինէից «Н. Вр.»-ին հեռագրում են, որ հոկտ. 2-ին Տուզի քաղաքը վերցնելուց յետոյ, չերնոգօրցիք ձեռք ձգեցին 3 դրօշակ, 11 թնդանօթ, 10,000 հրացան և մեծ քանակութեամբ զանազան ռազմամթերք։ Անձնատուր եղած Թիւրքաց զօրամասը բաղկացած էր 7000 զինուորից և 80 օֆիցէրներից։ Չերնոգօրցիների խանդավառութիւնը աննկարագրելի է։

Օսմանեան կառավարութիւնը հերքեց Պ. Հ. Գործակալութեան տեղեկութիւնը Վէլէսի քրիստոնեաների ջարդի մասին։

Թիւրքիան նոր օրէնք հրատարակեց, որ իրաւունք է տալիս կառավարութեանը պատերազմական ծախքերի համար հոգալ այն 1,200,000 ֆրանկը, որ յատկացված է Մակեդօնիայի եկեղեցական և դպրոցական պէտքերի համար։

Բ. Դուռը մի խումբ ամերիկացի դրամատէրերից փոխարինաբար վերցրեց 5 միլիօն Թիւրքական ֆունտ։ Փոխառութեան պայմանները պահվում են գաղտնի։

Սուլթանի ներքինները պատրաստակամութիւն յայտնեցին գնալ պատերազմի դաշտը։

Մինչև օրս Թիւրքիայից հեռացել են 32,000 յոյն։

Պետերբուրգից «Б.»-ին հեռագրում են, որ լուրերի համաձայն Վիէննա է գնացել ծպտեալ կերպով գերմանական Վիլհէլմ կայսրը, ուր նա գաղտնի տեսնվել է Ֆրանց Յովսէփի հետ Աւստրիայի ռազմի տրամադրութիւնը մեղմելու նպատակով։ Սակայն Աւստրիան իր պատերազմական պատրաստութիւնները շարունակում է։

Սուլթանը դիմեց զօրքին մի կոչով, որի մէջ նա յիշեցնում է, որ Ղուրանը արգելում է սպանել գերիներին և անպաշտպան թշնամուն և քայքայել տնտեսութիւնը։

Յայտնի ալբան զօրական Իսա Բօլէտինացը 10,000 մարդով միացաւ սերբերի հետ։

Ռումինիան յայտնեց իր չէզոք մնալու մասին։

«Դաշնակցութիւն» կուսակցութեան բիւրօն Թիւրքիայի բոլոր կենտրօնական կօմիտէներին ուղարկեց հետեւեալ հրահանգիչ հեռագիրը. «Բալկանեան պատերազմի պատճառով հայրենիքը գտնվում է վտանգի մէջ։ Հրաւիրում ենք բոլոր կենտրօնական կօմիտէներին ձեռք-ձեռքի տալով միւս քաղաքական կուսակցութիւնների հետ՝ միջոցներ ձեռք առնել երկրում խաղաղութիւն պահպանելու»։ («Б.»)

Մուշից, Բաղէշից, Վանից և այլ տեղերից ստացվում են հայերի նորանոր ջարդերի տեղեկութիւններ։ Հայերը կազմակերպվում են ինքնապաշտպան խմբեր։ («Б.»)

«Vos. Zeitung» լրագիրը մի մեծ յօդուած նուիրելով բալկանեան պատերազմին և նրա հնարաւոր հետեւանքներին՝ շօշափում է նաև այն վտանգի հարցը, որ սպառնում է Թիւրքիայում ապրող քրիստոնեաներին։ «Եթէ Թիւրքիան յաղթվի, այն ժամանակ, անկասկած, մահմեդականները կը թափեն իրանց զայրոյթը քրիստոնեաների վրա ամեն տեղ, ուր մուսուլման տարրը տիրապետող է։ Ամենից առաջ կը վճարեն տեղական քրիստոնեաները և նրանց մէջ առաջինը՝ հայերը, ապա յոյները և սերբիացիները։ Բայց ամբոխի զայրոյթը դրանցով կանգ չի առնի. նա չի խնայի և այն եւրոպացիներին, որոնք իր ձեռքը կընկնեն։ Վերջին տարիների ընթացքում անթիւ օրինակներ ցոյց են տուել, որ եւրոպացիների նախկին հմայքը Թիւրքիայում ընկել է։ «Երիտասարդ-թիւրքերի» տիրապետութեան օրերին, որոնք աւելի կամ նուազ բացայայտ կերպով քարոզում էին թշնամութիւն դէպի եւրոպացիները Թիւրքական հայրենասիրութեան անունով, այդ հմայքը միանգամայն կորաւ։ Իսկ եթէ Թիւրքերը յաղթեն։ Այն ժամանակ մահմեդական մեծամտութիւնը և ամբոխի ատելութիւնը դէպի եւրոպացիները (Թիւրք ամբոխը չէ հասկանում տարբերութիւնը բօլգարների և եւրոպացիների միջև. երկուսն էլ նրա համար միեւնոյն գեավուրներն են) անսահման կերպով կաճէ։ Ով ապրել է Թիւրքիայում 1897 թ., ով տեսել է թէ ինչ տպաւորութիւն գործեց մասսաների վրա ամենաաննշան մի յաղթութիւնը յոյների դէմ, նա կարող է հաստատել, որ մենք ամենևին յոռետես չենք»։

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 հոկտեմբերի

Բէլգրադ.—Հոկտ. 5-ին Նիշում հրատարակվեց թագաւորական հրովարտակը, որ ասում է.

«Նորագոյն դէպքերը վերստին յարուցին Բալկանեան Թերակղզու, միեւնոյն ժամանակ Հին-Սերբիայի վիճակի լուծման հարցը։ Անհամբերատար օսմանեան կառավարութիւնը ձգտում է ոչնչացնել ընդմիշտ մեր եղբայրներին։ Բեռլինի կօնգրէսից մինչև օրս օսմանեան կառավարութիւնը չէ ճանաչում սերբիական լեզուն, կրօնը և այն ամենը, ինչ որ սերբիական է, և բռնի միջոցներով կատարել է տալիս դաւանափոխութիւններ։ Հին Սերբիայի քայքայումը սկզբում կատարվում էր անամօթաբար ու խստութեամբ, նոր ռէժիմի ժամանակ նա շարունակվում է պետութեան բոլոր ժողովուրդները օսմանացնելու նպատակով նոր միջոցներով, որպէսզի մնայ սոսկ մի Թիւրք տարր»։

Խօսելով սերբերի անտանելի կացութեան մասին՝ հրովարտակը մատնանշում է, որ այդ դրութիւնը տարէ-տարի ստիպել է սերբերին գաղթել Հին-Սերբիայից։ Թիւրքիայի հետ տեղի ունեցած վերջին պատերազմից յետոյ Սերբիա են մտնում հազարաւոր աղքատացած փախստականներ, որոնք ստիպում են սերբիական կառավարութեանը մեծամեծ ծախքեր անել։ «Մասնակի զինված յարձակումները ստիպելով մեզ,—ասում է հրովարտակը,—խաղաղ ժամանակ այնքան զոհերով պաշտպանել մեր սահմանները, արգելք եղան մեր սահմանային ազգաբնակութեան կուլտուրապէս զարգանալ. անգամ Թիւրքիայի մաքսային միջոցները անմտօրէն արգելք էին լինում առեւտրական յարաբերութիւններին այդ նահանգներում։ Սերբիան, կտրված ծովից, վաղուց ի վեր պնդում է, որպէսզի Բ. Դուռը թոյլ տայ կառուցանել երկաթուղի մեր սահմանից մինչև Ադրիատիկ ծովը, որ կենսական հարց է յարուցանում Սերբիայի համար, սակայն ամեն ինչ ապարդիւն եղաւ։ Սերբիական կառավարութիւնները ամբողջ 34 տարի անընդհատ սպառեցին բոլոր դիպլօմատիական միջոցները ինչպէս բարեկամ պետութիւնների, այնպէս և Բ. Դրան առաջ։

«Ես իմ կողմից ամեն բան արի խաղաղ ճանապարհով փոխել տալու մեզ և մեր եղբայրների համար անտանելի դրութիւնը, և այդ նպատակով համաձայնութեան մէջ մտայ բալկանեան պետութիւնների թագաւորների հետ, որպէսզի միացեալ առաջադրութիւն անելով Կ. Պօլսում՝ բարելաւենք այդ ծանր դրութիւնը։ Պատրաստվելով դրան՝ մենք զարմացած մնացինք Թիւրքաց զօրքերի զօրաժողովներից և մեր սահմանում կենտրօնանալուց, որի դէմ մենք հարկադրված էինք ձեռք առնել նոյնանման միջոց։ Վերջ ի վերջոյ նորանոր գազանութիւններից, սպանութիւններից յետոյ Թիւրքիան յետ կանչեց իր դեսպաններին Բէլգրադից, Սօֆիայից և Աթէնքից։

«Ուստի ես, Աստուծոյ ողորմածութեամբ, հրամայեցի իմ քաջարի զօրքերին դիմել դէպի սրբազան կռիւ յանուն մեր եղբայրների ազատութեան և սերբիական թագաւորութեան լաւագոյն ապագայի։ Հրաւիրում ենք ձեզ, սիրելի եղբայրներ, ամեն ջանք գործ դնել ամեն տեսակ աջակցութիւն տալու իմ պանծալի զօրքին իր նպատակին հասցնելու համար։

«Կեցցէ իմ սիրելի սերբ ժողովուրդը...»։

ԽԱՂԱՂԱՍԷՐՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Դ'Էստուրնէլ դը-Կօնստան, սենատոր և խաղաղութեան միջպարլամենտական լիգայի նախագահը, դիմում է արել չերնոգօրական Նիկօլայ թագաւորին հետեւեալ բաց նամակով.

Ձերդ մեծութիւն.

Երեսուն տարին, որ անցել է բերլինեան տրակտատը կայացնելուց և եւրոպական սահմանները որոշող այն յանձնաժողովի աշխատանքները աւարտելուց յետոյ, որի քարտուղարն եմ եղել ես, ինձ հնարաւորութիւն են տալիս խախտելու դիպլօմատիական մի գաղտնիք։ Իսկ ձերդ մեծութիւնը իր գործողութիւններով ստիպում են բոլոր ազնիւ մարդկանց բողոքելու Թիւրքիային ձեր կողմից պատերազմ յայտարարելու դէմ։

Ես կոչ եմ անում սահմանները որոշող յանձնաժողովի իմ բոլոր ընկերակիցներին, խնդրելով վկայել ասածներիս։

Նրանց վրա տխուր պարտականութիւն ընկաւ խլելու Ալբանիայից նրա հողերի մի մասը (որը դուք չէիք գրաւել) և յանձնելու նրան Չերնոգօրիային։

Իմ ընկերակից անգլիացի սըր-Վինսենտ Կայլարի հետ միասին մենք այն ժամանակ գտնվում էինք Պօդգօրիցայի տխուր աւերակների վրա։ Ձեր զինուորները հէնց նոր էին հրդեհել այն։

Մենք ամենքս ամաչում էինք, որ եւրոպական խաղաղութիւնը դուք խախտեցիք ձեր օգտի համար։ Մենք հասկացանք, որ ձեր սանձած պատերազմը միայն բացատրվում էր նրանով՝ թէ «la guerre est votre industrie»։

Ժամանակը անցաւ։ Դուք դարձեալ պատերազմ՛ էք սկսում և սպառնում էք եւրոպական հրդեհ բռնկցնել յոկ նրա համար, որպէսզի նրանց վրա ձեր շղթաները նետէք։ Չերնոգորիայում ձեզ ոչ ոք չէ կարող հակառակվել․ ցաւում եմ, որովհետև այլապէս՝ այն պատիժը, որ պատրաստում է ձեզ համար քաղաքակիրթ աշխարհը, կը գար աւելի վաղ։

ՎՈՍՖՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Պատերազմը հռչակուած

Կ. Պոլիս, 27 սեպտեմբեր

Ինչ որ կը սպասուէր, կատարուեցաւ.

Բալկանեան պետութիւններէն Չերնոգորա երկու օր առաջ պատերազմ հռչակեց Թիւրքիոյ դէմ՝ անշուշտ կախաւ եղած համաձայնութեան մը վրայ։

Տակաւին միւս պետութիւնները չեն հռչակած պատերազմը։ Կառավարութիւնը, զգալով դէպքերու գահավէժ ընթացքը և իսլամներու արտասովոր գրգռութիւնը, ստիպուեցաւ պատերազմական վիճակ հռչակել։

Եւրոպական դիւանագիտութեան ձեռք առած միջոցներով՝ կարծուեցաւ, թէ պահ մը պատերազմի ամէն վտանգ անհետացած է, սակայն թիւրք խուժանը և մանաւանդ օսմանեան համալսարանի ուսանողութիւնը այդ զարհուրելի վտանգին անհետանալը Թիւրքիոյ շահերուն աննպաստ համարելով՝ այդ վտանգին մէջ նետեց կրկին Թիւրքիան։

Ղազի Մուխթար և Քեամիլ փաշաներու դահլիճը, պատերազմի տեղի չտալու համար, յօժարեցաւ Բերլինի դաշնագրին 23-րդ յօդուածը գործադրելու խոստում տալ եւրոպական կառավարութեանց։

Ասոր փոխարէն Եւրոպա Թիւրքիոյ պիտի ապահովէր Բալկանի խաղաղութիւնը, որ ամենէն թանգագին օժանդակութիւնը պիտի ըլլար, ընծայուած Թիւրքիոյ։

Սակայն թիւրք խուժանը և մանաւանդ օսմ. համալսարանի ուսանողները, իթթիհադականներու թելադրութեամբ, դահլիճին այս տրամադրութիւնը նախատինք մը համարելով օսմ. կայսրութեան դէմ և օտար միջամտութիւն, կազմակերպեցին խոշոր ցոյց մը, որուն բուն նպատակն էր կառավարութիւնը տապալել։

Օսմ. համալսարանի ուսանողները համալսարանի շէնքին մէջ իրենց ըրած մէկ միտինգն և վարչապետութեան ուղղած մէկ շատ նախատական հեռագիրն անբաւական համարելով, պետութեան գործերուն չմիջամտելու համար կրթական մինիստրութեան խորհրդական Սալիհ Զէքի-բէյի— Թիւրքիոյ առաջնակարգ մաթեմատիկոսներէն մէկը—յորդորներն ոչ միայն մերժեցին, այլ թուղթերու տրցակով մը պատուեցին և անարգեցին։

Յետոյ խումբ կազմելով գացին Բ. Դուռ և նոյնիսկ հրացաններով սպառնացին դահլիճին, խաղաղութեան համար Եւրոպայի առջև խոնարհելու տրամադրութիւն յայտնած ըլլալուն համար։

Նախատեցին վարչապետ Ղազի Ահմէդ Մուխթար-փաշան և պատերազմական մինիստր Նազըմ-փաշան՝ անոնց երեսին պոռալով, թէ երբէք զիրենք լսել չեն ուզեր և կը պահանջեն «անպայման պատերազմ»։

Նախատուեցաւ նաև Նորատունկեան էֆ., որ իբր թէ օտար միջամտութիւն ընդունելով՝ օսմ. կառավարութիւնը կը վտանգէ եղեր։

Ուսանողութիւնը վայրագօրէն Բ. Դրան ապակիները կոտրելով հանդերձ՝ իր կոկորդին բոլոր ուժով կը պոռար՝ «անկցի կառավարութիւնը», «անկցի Բերլինի դաշնագիրը», «անկցի 23-րդ յօդուածը»։

Կառավարութիւնը ցուցարարները ցրուելու համար ոստիկանական ուժ գործածեց և անմիջապէս ուրիշ այս տեսակ ցոյցերու տեղի չտալու համար՝ պաշարման վիճակ հրատարակեց։

Այս ցոյցին վատթար տպաւորութեան չենթարկելու համար Եւրոպայի հանրային կարծիքն և դիւանագիտութիւնը՝ կառավարութիւնը արգիլեց այս ցոյցին վրայ գրել։ Իթթիհադական «Թանին» զարմանք յայտնելով, թէ ինչպէս կառավարութիւնը այսպիսի հայրենասիրական ցոյց մը կարգիլէ, ինքը միակն եղաւ տեղական մամուլին մէջ, որ այդ ցոյցը նկարագրեց։

Հիմա կառավարութիւնը դատ բացած է «Թանինին» դէմ, միւս կողմէն դաս մը ըլլալու համար օսմ. համալսարանի ուսանողութեան՝ զանոնք ամենն ալ զէնքի տակ կոչած է և ուղղակի պատերազմի դաշտը պիտի ղրկէ։

Զինուորական օրէնքի տրամադրութեանց համաձայն, համալսարանի ուսանողները զերծ են զինուորական ծառայութենէ։

Ուսանողներն այս յօդուածին վրայ հիմնուած, գիտնալով որ իրենք զէնքի տակ չեն կոչուիր, ամենէն աւելի կը պոռային կատաղութեամբ ի նպաստ պատերազմին, ըստ առածին թէ՝ «կուշտն անօթիին մանր կը բրդէ»։

Ուսանողներու այս ցոյց կատարելը հազիւ 24 ժամ եղած էր, երբ պատերազմը հռչակուած ըլլալու լուրը տրուեցաւ։

Իսլամները, որ արդէն շատ գրգռուած էին մամուլին հրատարակութիւններէն, գրեթէ խնդութեամբ ողջունեցին այս լուրը, որ մայրաքաղաքին և գաւառի հայութիւնը անհանգստելու շատ մեծ պատճառ մըն է։

Անցեալ անգամ արդէն գրած էի, թէ շատ մը տուներ մշտնջենական սուգի կը մատնուէին զրկուելով իրենց գործող ձեռքերէն, որոնք անդարձ կը մեկնին՝ զինուորական դասալիք ըլլալով։

Անցեալ շաբթու սակայն կառավարութիւնը որոշելով առնել զինուորական փրկանք, հիմա գրեթէ քրիստոնեաներու մեծագոյն մասը կը փութայ ոսկէ կերպով մը հայթայթել այդ փրկանքի գումարն և իր անձն ազատել։ Հիմա կը մնայ բացարձակ չքաւոր դասակարգը, որ կամ կը թողու կը փախչի կամ ակամայ կերթայ պատերազմի։

Տեղեկութեանց համաձայն, հինգ օրուայ մէջ միայն Կ. Պոլսոյ մէջ կառավարութիւնը գանձած է 800,000 ոսկի (1,920,000 ր.)։

Ասկէ առաջ երեք տարուան միջոցին կառավարութիւնը իբր զինուորական ծառայութենէ զերծ մնալու տուրք գանձած էր արդէն 3 միլիոն ոսկի։ Հիմա կը մտածուի, թէ այս երեք միլիոնը հայթայթողները զէնքի տակ կոչուելով պիտի տան նաև 2½ միլիոն ոսկի։

Թիւրք սնանկ կառավարութեան համար այս տեսակ հասութաբեր աղբիւր մը անշուշտ չէր կրնար առանց շահագործութեան մնալ։ Հետևաբար կառավարութիւնը սկսաւ շահագործել այս ոսկեբեր հանքը։

Հիմա ուտելով գրգռուած ախորժակը սրուած է և կուզէ նաև զէնքի տակ կոչել 29-էն մինչև 45 տարեկանները, հակառակ անոր, որ անոնք արդէն նախորդ բէժիմին մէջ տարիներով զինուորական տուրք տուած են և զինուորական մարզանք ալ երբէք չեն տեսած։

Իր բուն հետապնդած նպատակն ուրիշ բան է։

Կառավարութիւնը կը մտածէ, թէ 29-էն 45 տարեկաններէ շատեր գիրք մը չինած են, զաւակներու տէր են, և բոլորովին անընդունակ զինուորութեան, ուստի աւելի մեծ հաւանականութեամբ պիտի փութան զինուորական փրկանք տալ և ինքզինքնին ազատել, ինչ որ կառավարութեան շատ ձեռնտու է։

Կառավարութեան այս տրամադրութիւնը խորունկ յուզում առաջ բերած ըլլալով հայ շրջանակներու մէջ՝ հայոց պատրիարքը, հակառակ անոր, որ հրաժարած էր, Բ. Դուռ գնաց և վարչապետին մօտ դիմում կատարեց, 29-էն 45 տարեկաններու զէնքի տակ կոչուելու խնդրոյն համար, յիշեցնելով թէ արդէն իրեն խոստում տրուած էր ասկէ առաջ բանաւոր կարգադրութիւն մը ընել։

Սակայն Թիւրքիոյ վարչապետին խօսքին չենք գիտեր թէ հայոց պատրիարքը որքան կրնայ վստահութիւն ընել, մանաւանդ երբ միւս կողմէ կառավարութիւնը ցուցակներ կը կազմէ 29.էն 45 տարեկաններու։

Հետևաբար այս խնդիրը տագնապալի երևոյթ մը առած է, զի ասիկա անտեսական փչացում է ժողովուրդին։

Հայերն այս մեծ մտահոգութենէն զատ ունին աւելի ծանր տագնապ մը։ Այն ալ Հայաստանի նահանգներու վիճակն է, որ պատերազմին պատճառով երկիւղալի երևոյթ մը կառնէ։

Իսլամներն առանց բացառութեան բոլոր քրիստոնէից դէմ զինուած են և շատ դէշ աչքով կը դիտեն։

Նոյն իսկ զանազան գաւառներէ լուրեր կը հասնին, թէ ջարդի պատրաստութիւններ կը տեսնուին։

Ասիկա շատ գէշ բան մըն է, և բացարձակապէս յուսահատական հայոց համար, որոնք ապաւէն մը և զօրավիգ մը չունին։

Դժբաղդ հայ, դժբաղդագոյն Հայաստան, որ ոչ ուժ ունիս և ոչ ալ ապաւէն։

Շառայ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

—o—

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կ. Պոլսից հաղորդում են «Temps» լրագրին այն մեծ յուզմունքի մասին, որ տիրում է տեղական հայերի մէջ քիւրդական աւազակների անպատիժ մնալու առիթով, որոնք սիստեմատիկ կերպով հալածում են Փոքր-Ասիայի խաղաղ հայ ազգաբնակութիւնը, թիւրքաց ոստիկանութեան բարեհաճ աջակցութեամբ։ Պոլսի հայոց պատրիարքը ամենայն օր հեռագիրներ և նամակներ է ստանում սարսափելի վիլայէթներից. այդ գրութիւններով աղերսում են պաշտպանութիւն ցոյց տալ։

Այդ հաղորդագրութիւնները զարհուրելի գոյներով են պատկերացնում կեանքը. ըստ երևոյթին, վերադարձել են վատթարագոյն ժամանակները այն արիւնոտ օրերի, որոնցով դրոշմել է իր յիշատակը սուլթան Աբդուլ Համիդը։ Քրիստոնեայ ազգաբնակութիւնը բառացի կերպով դողում է իր գոյութեան համար, վախենում է միանգամայն բնաջնջումից։ Ոտքից մինչև գլուխ զինված աւազակները անարգել կերպով իշխում են հայկական գիւղերում. մահվան սպառնալիքի տակ նրանք խլում են հայերի ինչքը, ստիպում են տալ ինչպիսի պարտաւորութիւններ ուզում են, շորթում են՝ ինչ որ կամենում են, հարկադրում են իրանց տալ հողերը և թողնել տները, կացարանները։ Ամենաաննշան դիմադրութեան դէպքում մահվան պատժի են ենթարկում։ Վանի արքեպիսկոպոսի հաղորդագրութեան համաձայն, գիւղ չը կայ, ուր այս վերջին ամսվայ ընթացքում կատարված չը լինեն սպանութիւններ։ Տեղական ոստիկանութիւնները խրախուսում են քիւրդերին, որոնց կատարած կողոպուտներից իրանք էլ բաժին են ստանում, և կարգ ու կանոնը վերականգնելու պատրուակով հայերից խլում են զէնքերը, զրկելով նրանց ինքնապաշտպանութեան դիմելու յոյսից։ Հայ գիւղացիներից շատերը պատրաստ են ամէն ինչ թողնել—հողը, տունը, ինչքը—և փախչել, գաղթել ուր կուզէ լինի, միայն թէ փրկեն իրանց ընտանիքի կեանքը, սակայն այդ հնարաւորութիւնից էլ զրկված են նրանք, որովհետև բոլոր ճանապարհները ներկայումս գտնվում են աւազակների ձեռքում, որոնք չեն թոյլ տալ նրանց՝ փախուստի դիմելու։ Կ. Պոլսի կառավարութիւնը միանգամայն անզօր է որևէ փոփոխութիւն մտցնելու երկրի դրութեան մէջ, մինչև իսկ անկեղծօրէն ցանկանալով յարգել պատրիարքի յայտարարութիւնները։ Քրիստոնեայ ազգաբնակութեան համար անհնարին է դարձել Թիւրքիայում ապրելը, ինչ խոստում էլ որ նա տալու լինի, ինչպիսի վարիչներ էլ որ նա նշանակելու լինի։ Միայն Եւրոպայի խիստ կոնտրոլը կարող է օգնել դարաւոր ցաւին, և հայ ազգաբնակութիւնը ջերմօրէն ակնկալում է, որպէսզի իր աղերսանքներն էլ լսելի գտնեն և ուշադրութեան առնվեն Թիւրքիայի վրա ներգործութիւն անելու դէպքում, պահանջելով վերջ տալ վերջապէս իր հպատակ քրիստոնեայ ազգութիւնների տառապանքներին։

—

Պատրիարքարան լուր տրուած է, թէ Ադանայի մէջ գտնուող այն տարրերն, որոնք երկրին արտաքոյ կարգի մէկ վիճակէն օգտուել կուզեն, այս միջոցին դարձեալ խլրտումներ հանելու փորձեր կընեն։ Սրբազան պատրիարքն այսօր հեռագրաւ բացատրութիւն պիտի պահանջէ այս մասին Ադանայի առաջն. փոխանորդէն, և միւս կողմէ եպարքոսութեան ուշադրութիւնը պիտի հրաւիրէ Ադանայի մէջ գտնուող այս կարգի մարդոց վրայ, որոնք կառավարութեան կամքին հակառակ կրնան ցաւալի դէպքերու առիթ տալ, եթէ պահանջուած հսկողութիւնն ի գործ չդրուի տեղական իշխանութեան կողմէ։ («Բիւզանդիոն»)

ԲՈՂՈՔԻ ՁԱՅՆԸ

—

Սեպտ. 9-ին, կիրակի, Եգիպտոսի մայրաքաղաքում, Կահիրէում, տեղական հայ գաղութը, պատարագից յետոյ, նախաձեռնութեամբ Կ. Պոլսի ազգ. Կենտրոնական վարժարանի նախկին սաների և նախագահութեամբ առաջն. փոխանորդ Ս. ա. ք. Շաղոյեանի, բողոքի մի մեծ միտինգ է կազմել տեղական եկեղեցու բակում, ուր բանախօսել են Սուրէն Պարթևեան, հայբողոքականների ներկայացուցիչ պատուելի Խանդամուր և այլք։ Այդ միտինգն ընդունել է հետևեալ բանաձևը և հեռագրել Կ. Պոլիս՝ մեծ-վեզիրին, հայոց պատրիարքարանին, «Բիւզանդիոն», «Ազատամարտ», «Սաբահ», «Լէվանտ Հէրալդ» և «Ստամբուլ» թերթերին, ստորագրված Կահիրէի հայ գաղութի կողմից.

«Կահիրէաբնակ հայերս, այսօր, կիրակի 22 սեպտեմբերին, թուով մօտ 1000 հոգի, նախագահութեամբ Եգիպտոսի առաջնորդական փոխանորդ հօր, մեծ միտինգ մը գումարելով Կահիրէի ս. Աստուածածին եկեղեցւոյ բակին մէջ, լսելէ յետոյ օրուան ատենախօսները՝

«Մեր անհուն վիշտն ու զայրոյթը կը յայտնենք Հայաստանի մեր եղբայրներուն կրած նորանոր խժդժութեանց հանդէպ։

«Ուժգնօրէն կը բողոքենք ներքին գործեր մինիստրու Դանիշ-բէյի կողմէ հայոց պատրիարքին յայտնուած այն ախտանշանական կարծիքին դէմ, թէ հայկական ներկայ ջարդերը ամէն տեղ պատահող սովորական դէպքեր եղած ըլլան։

«Կամբաստանենք չորս տարիէ ի վեր իրարու յաջորդող օսմանեան դահլիճները՝ հայոց նկատմամբ հետևած ըլլալնուն համար անտարբերութեան, լքումի և նոյնիսկ չկամութեան գործելակերպի մը, որ իր հետևանքներուն մէջ ոչինչով կը տարբերի համիդեան բռնապետութեան սիստեմատիկ հալածանքներէն։

«Կը հարցնենք, ծայրագոյն անձկութեամբ, թէ բաւական չէղա՞ւ ազատութեան սեղանին վրայ հայերուն բերած 300,000 զոհերու հսկայ ողջակէզը, բաւական չհամարուեցան սահմանադրութեան հովանւոյն տակ իսկ թափուած Ադանայի արիւնները և անոնց վրայ բարձրացուած անմեղ հայերու կախաղանները։ Վերջապէս հայը պիտի չունենա՞յ երբէք, իր հայրենիքին մէջ, պատուոյ, կեանքի և ինչքի տարրական ապահովութիւնը։

«Կը պահանջենք որ անյապաղ վերջ մը տրուի հայոց մասին՝ այս մասնաւոր բէժիմին՝ որ նախատինք մըն է մարդկային արժանապատուութեան դէմ և մանաւանդ հարուած մը օսմանեան համերաշխութեան սրտին։

«Կը պահանջենք, որ օսմանեան արդարութիւնը մէկ չափ և մէկ կշիռ ունենայ հայուն թէ քիւրդին, ինչպէս բոլոր միւս օսմանցի ցեղերուն համար, որ մարդասպանները անխտիր ու անողոք կերպով պատժուին, անոնց պատրաստուած ու պատրաստուելիք աղէտներուն առաջքն առնուի և հայերուն վերադարձուին իրենց հողային արդար իրաւունքները։

«Կը պահանջենք անմիջական կազմակերպութիւնը դատարաններու և ոստիկան-զինուորներու, տեղական հայ տարրին մասնակցութեամբը։

«Մէկ խօսքով կը սպասենք, որ օսմանեան կառավարութիւնը ընդունի այլ ևս, թէ օսմանցի հայը յաւիտենապէս իբրև մորթուող ստրուկ չի կրնար ապրիլ հաւասարակաց հայրենիքին մէջ»։

—

Կահիրէում գումարված յիշեալ միտինգը տեղական ամբողջ հայ գաղութի կողմից հետևեալ հեռագիրն է ուղարկել Էջմիածին՝ Վեհ. Հայրապետի անունով.

«Բուռն բողոքներ խրկուեցան այսօր թիւրք կառավարութեան, Հայաստանի մէջ գործուած նոր խժդժութեանց դէմ։

«Ժողովուրդը կը պահանջէ ձեզի հաղորդել այս առթիւ իր անհուն վիշտը և բուռն զայրոյթը»։

(Հեռագիր «Բիւզանդիոնի»)

Պաֆրա, 16 սեպտեմբեր

Այսօր մեռելոցի տօնին առթիւ տեղւոյս հնչակեան և դաշնակցական մասնաճիւղերուն անդամոց հետ բոլոր ժողովուրդը հաւաքուելով, Հայաստանի մէջ տեղի ունեցած հարստահարութեանց և մեր պատւոյն քսուած արատին դէմ բողոքելով, վայրենական ոճիրներուն վերջ տալու համար ազգու և վճռական միջոցներու գործադրութիւնը կը պահանջենք։—Ստորագրութիւնք՝ Ժողովրդեան կողմէ Հմայեակ քհն. Պախճիւրեան, հնչակեաններու կողմէ դոքտ. Պէնէ, դաշնակցականներու կողմէ Յարութիւն Շէքէրճեան։

ՅՕԳՈՒՏ ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

—

Սարգիսեան նուիրատուութիւն 2000 անգլ. ոսկի.—Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ պ. Գէորգ Սարգիսեան Միութեան հաշւոյն Կրէդի Լիոնէի յանձնեց 2000 անգլ. ոսկի, որ կը ներկայացնէ իր և իր բարեսէր տիկնոջ վեհանձն նուիրատուութիւնը՝ Ակնայ մէջ բարենպատակ ձեռնարկի մը ի նպաստ։ Տիար Գէորգ Սարգիսեան կիմացնէ միևնոյն ժամանակ, թէ քիչ ատենէն պիտի հաղորդէ այս մասին իր տրամադրութիւնները։

Այս կարեւոր նուիրատուութեամբ՝ տէր և տիկին Սարգիսեան ըստ կանոնագրի Միութեան բարերար անդամ կըլլան։

Դարձեալ նուիրաբերում.—Հնդկահայ մեծահարուստ տիար Մակրտիչ դիտաւորութիւն ունենալով ազգը օժտել կարեւոր բարերարութեամբ մը, Լոնդոնէն այս մասին բանակցութեան մտած է Միութեան հետ։ Վսեմ. Պօղոս փաշա Նուպար իր կողմէ ներկայացուցիչ կարգած է Լոնդոնի մասնաժողովը։

Կրկին նուիրատուութիւն.—Միութեան պատւոյ անդամ տիար Ռ. Մարկոսեան, որ վերջերս Միութեան նուիրեց 10,000 ֆր., փափաք յայտնած ըլլալով 10,000 ֆր.-ի նուիրաբերութիւն մը ևս Միութեան ընել Մուշի Առաքելոց գիւղի ի նպաստ, գիւղային դըպրոց մը հիմնելու և հողագործներուն ալ օգնելու ազնիւ առաջադրութեամբ, այս մասին մասնաւոր ուսումնասիրութեան ձեռնարկուած է։ («Միութիւն»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ «ՄՇԱԿԻ» ՖՈՆԴԻ

—

Ստացանք Պարիզից, հայոց եկեղեցու հոգաբարձութեան և հոգևոր հովիւ Վռամշապուհ աւագ քահանայի միջոցով, Պարիզի հայ գաղութի մէջ հանգանակված 500 ֆր., կամ 186 ր. 90 կ., որ նախորդ ստացված գումարների հետ՝ 28,704 ր. 45 կ. (տես «Մշակ» № 206) համագումարը կը լինի 28,891 ր. 35 կոպէկ։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆ

—

Շուշի, 30 սեպտ.

Քաղաքիս հայոց թեմական դպրոցում կայացած մանկավարժական ժողովում, որտեղ մասնակցում էին և տեղական Մարիամեան օրիորդաց դպրոցի ուսուցիչները, որոշվեց, Նորին Վեհափառութեան կոնդակի համաձայն, հոկտ. 13-ին տօնել մեր տառերի գիւտի 1500-ամեակը և հայ տպագրութեան 400-ամեակը։ Յիշեալ յոբելեանի տօնախմբութեան ծրագիրը կազմելու համար երկու դպրոցների ուսուցիչներից յանձնաժողով կազմվեց։ Ս. Վ.

ԱՄԲՈԽԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Ընտրվել մի հասարակութիւնից և գործել նրա օգտին անշահասիրութեամբ՝ կը նշանակէ լինել պարտաճանաչ, յարգել ինքն իրան, սիրել ժողովուրդը և լաւ օրինակ ծառայել։ Բայց ընտրվել և փախչել կամ հակառակը գործել՝ կը նշանակէ լինել անպարտաճանաչ, իր մասնաւոր շահը գերադասել հանուրից, դաւաճանել ինքն իրան և իրան հաւատացած հասարակութեան։

Սակայն մեր գաւառական տխուր իրականութեան մէջ ամէն բան էլ թարս է հասկացվում. եթէ դուք ընտրվելով հասարակութիւնից և ստանձնելով ձեր պաշտօնը՝ ձեզ համար սկզբունք կընդունէք նախ հանուրը և ապա մասնաւորը, ձեզ չեն հաւատայ, կասեն՝ խենթ է։ Եթէ դուք մոլի կը լինէք դէպի մի անգամ ձեր համոզված սկզբունքը և կը գործէք նոյն ուղղութեամբ, արհամարհելով ասէ-կօսէները, կասեն՝ ախմախ է։ Եթէ դուք, ձեր գործունէութեան ընթացքում, ձեր պաշտօնին ու դիրքին վայել, քիչ մարդավարի հագնվել կը սկսէք կամ պատշաճաւոր մարդկանց հետ նիստ ու կաց կունենաք, կասեն՝ այստեղ մի «և» կայ, սա շատ «ուստա» մարդ դուրս եկաւ։ Եթէ դուք կը գործէք շիտակ, մոռանալով նոյն իսկ ընտանիք, կը խեղդվէք կարիքի մէջ, քաղցից ձեր տանեցիք դժուար, դանդաղ կը քայլեն, կասեն՝ այնքան կերել է հասարակութիւնից, որ քայլուածքն էլ է փոխել, շատ «խոռնիկն» է։ Եւ, այդ բոլորի հետևանք կը սկսեն կասկածել, ենթադրութիւններ անելու ձեր մասնաւոր կեանքի այնպիսի մասերին, մի հրէշաւոր, մանրակրկիտ ստեղծագործած հաշիւ կը յայտարարեն, որ լսողը կապշի։ Երբ, այդ ամէն զրպարտանքին զոհ, դուք կամ զզվում հեռանում էք, ասպարէզը թողնելով ուրիշներին, կամ հասարակութիւնը ինքն է հեռացնում, ու վերջում պարզվում է, որ դուք ձեր գործունէութեան ընթացքում բացի պարսաւից և հակառակորդներից ոչինչ չէք շահել, ձեր որդին կիսաբոբիկ է գնում դպրոց... ասում են՝ կերաւ, բայց չը մարսեց։ Իսկ երբ դուք մեռնում էք, սկսում են ձեր և ներկայ գործիչների գործունէութիւնը համեմատել ու ասում են՝ լուսահոգին լաւ, շիտակ մարդ էր, բայց մենք չը գնահատեցինք։ Բայց եթէ դուք կարողանում էք, շահագործելով ազդեցիկներին, ժողովրդի տգէտներին, վարպետօրէն հանուրի շահը ծառայեցնել ձեր օգտին, իսկ հակահասարակական գործունէութեան աստառը բացվելուց՝ անմարդութեամբ, ճարպիկօրէն ձեր յանցանքը փաթթել ձեզ հետ գործակից ընկերոջ կամ մի ուրիշի վզին ու դուրս պրծնել, թող փչելով ամբոխի աչքերին, բարձրագլուխ, առանց պատկառանք զգալու ինքներդ ձեր խղճի առաջ, կասեն՝ զօչաղ մարդ դուրս եկաւ... Եւ այսպէս, յարգելի ընթերցող, ինքներս սպանելով մեր լաւ ույժերը՝ խրախուսում ենք «զօչաղներին», առաջ քշում ամբոխային տրամաբանութիւնը։

Անշուշտ մտածողներ կը լինեն. եթէ այդպէս է, էլ ինչո՞ւ գրենք, գործենք, աշխատենք, երբ ամբոխի տրամաբանութիւնը այդպէս սպանիչ է։ Որովհետև ժողովուրդը խաւարի մէջ խարխափում է, նա անգիտակցաբար է անում այդ ամէնը, ուստի մենք պարտաւոր ենք սիրել այդ ժողովուրդը այն գիտակցութեամբ, թէ ում շատ է տրված, նրանից էլ շատ է պահանջվում։

Ո՛վ, դէպի աշխատանք. հեռու գործչից վհատութիւնը. գործիչը զոհ պիտի մնայ ինքն իրանից՝ լոկ այն գիտակցութեամբ, որ ինքը հասկանալով կատարում է իր անհատական պարտականութիւնը, ամբոխի սիրուց զրկված, և իր լուման գցում է հանուրի գանձանակի մէջ, հեռու մնալով միևնոյն ժամանակ ամբոխի մկրտած «զօչաղութիւնից»։

Սթափվի՛ր և դու, կատար, և դու, ժողովուրդ, ճանաչիր քո իսկական բարերարին, սովորիր ստեղծել և ոչ սպանել։ Քո փրկութիւնը որոնիր անհատական և հաւաքական խաղաղ, անդուլ, կուլտուրական աշխատանքի մէջ, առանց որին դու ջարդ ու փչուր կը դառնաս՝ ոչ շատ հեռու մի օր։

Հաւատ ունեցիր դէպի ապագան, դէպի քո մէջ շիտակ գործիչը և գնա նրա հետևից, եթէ նա քո օգտին է գործում։

Եւ ով շիտակութեամբ կը գործի այն հասարակութեան մէջ, որի շրջանում ինքը ապրում է, այդպիսին արժանի է մեր խորին յարգանքին։

Ե. Վարդանեան

Միղրի

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Շուշի, 30 սեպտ.

Թեմական դպրոցում այս տարվանից, շնորհիւ հոգաբարձութեան և դպրոցի տեսուչ բժ. Նարամիշեանի աշխոյժ հոգացողութեան և ջանքերի, մի քանի բարեփոխութիւններ տեղի ունեցան, օրինակ՝ նկարչութեան դասերը և մարմնամարզութիւնը, որոնք մինչև այժմ չը կային։ Մարմնամարզութեան համար արդէն բոլոր պիտոյքները լրիւ պատրաստ են, մնում է միայն ուսուցիչը, որը մօտ օրերս կը հրաւիրվի։

Թեմիս առաջնորդ Զաւէն վարդապետը արդէն գնացել է Էջմիածին և հոկտ. 6-ին էլ թեմ. դպրոցի տեսուչ բժ. Նարամիշեանն է ուղևորվելու Էջմիածին՝ հայոց դպրոցների վերաբերեալ կարևոր խնդիրների մասին խորհրդակցելու համար։

Ստեփան Վարդանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մայրաքաղաքի թերթերի ասելով, Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը ևս մեկնում է Պետերբուրգից Սպալա։

◆ Հանգուցեալ Գ. Սունդուկեանի ժառանգները մի նամակի հետ՝ յանուն քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի, նախ շնորհակալութիւն յայտնելով, որ քաղաքի փողոցներից մինը պէտք է կոչվի հանգուցեալ դրամատուրգի անունով, ուղարկում են. 1) հանգուցեալ Սունդուկեանի լուսանկարը, 2) նրա գրասեղանի թանաքամանը, 3) այն գրչակոթը, որով հանգուցեալը գրեց իր վերջին «Կատակ» պիէսը, 4) այն իսկական «սէգալը», որ Իրակլի Թագաւորը տուել է հանգուցեալին Օրթաճալայի այգիներից մինի համար։ Քաղաքագլուխը ժառանգներին յայտնեց խորին շնորհակալութիւն։

◆ Մեզ հաղորդում են, որ մինչև օրս Թիֆլիսի հայ դպրոցները դեռ չեն ստացել տառերի գիւտի առաջիկայ յոբելեանական տօնակատարութեան հրահանգը, որ Էջմիածնից պիտի ուղարկվէր։

◆ Ստացանք Սամարղանդից՝ Մարկոս Պօղոսեանից և Գէորգ Եղիզարեանից 6 րուբլի յանձնելու «Մշակի» № 210-ի մէջ յիշված հին-նախիջևանցի Յովհ. Արտեմեան Գրիգորեանցի ընտանիքին։

◆ Մայրաքաղաքի թերթերի ասելով, կովկասեան համալսարանի բացման հարցը կը քննվի Պետերբուրգում, մինիստրների խորհրդի նիստում, այս հոկտեմբերի 12-ին։ Բացի մինիստրներից, այդ կարևոր հարցի քննութեանը մասնակցելու են նաև Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը, փոխարքայի դիւանապետ հօֆմէյստէր Պետէրսօնը և կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդօլֆը։

◆ Խմբագրութիւնս ստացաւ Գ. Բաշինջաղեանի մի նոր աշխատութիւնը «Ուսանողներ» վերնագրով։ Սա մի պիէս է ուսանողական կեանքից, 3 գործողութեամբ։ Նրա ընթերցումը թողնում է նկատելի կենդանութիւն շնորհիւ կենդանի տեսարանների և հարթ լեզուի։ «Ուսանողները» համարձակ կարելի էր դնել հայ բեմի վրա։ Բաշինջաղեանի ներկայ երկը, որ արտատպված է «Արօր» ամսագրից, արժէ 50 կ.։

◆ Մի խումբ Ջալալ-օղլեցի երիտասարդների նախաձեռնութեամբ Ջալալ-Օղլիում հիմնվում է ակումբ։

◆ Այս տարվայ սկզբից մինչև օգոստոսի 1-ը Բաթումի նաւահանգստով արտասահման է արտահանվել Ճիատուրայից 2.438,894 բ. մարգանեց, իսկ Փօթիի նաւահանգստի միջոցով 3.878,884 րուբլու։

◆ Բուլթայխում պատուիրակներ են ընտրվել 3 վրացի, որոնց մէջ է 3-րդ Պետ. Դումայի անդամ սոց.-դեմօկրատ Գէգէչկօրին։

◆ Առաջիկայում կայանալիք բամբակագործների համագումարի առիթով կազմակերպիչ բիւրօն պատրաստում է այն բոլոր հողաբաժինների ցանկը, որոնք պիտանի են բամբակ ցանելու համար։

◆ Մեզ հաղորդում են հաստատ աղբիւրից, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը արձակել է պաշտօնից կալուածների կառավարիչ Կ. Գասպարեանին։ Արդեօք այդ արձակումը կապ ունի՞ այն զեղծումների հետ, որոնք վերջերս տեղի ունեցան Ներսիսեան դպրոցում։ Չը նայելով որ ինքն Կ. Գասպարեանը յայտարարեց «Հօրիզօնի» մէջ, որ իր պատիւը արատաւորված է տեսնում, և սպառնաց դրպարտութեան դատ յարուցանել «Մշակի» և «Тифл. Листокъ»-ի դէմ, որոնք հաղորդել էին միայն քաղաքում տարածված լուրերը, այն էլ վերապահումով, չը նայելով որ «Հօրիզօնը» հոգաբարձու Ն. Կաճկաճեանի հետ միասին աշխատեց հերքել Կ. Գասպարեանի մասին տարածված լուրերը, բայց յետագայ փաստերը, մանաւանդ Ներսիսեան դպրոցի հաշուապահ Էքսիւզեանի և քարտուղար Տէր-Աստուածատրեանի նամակը, տպված «Тифл. Листокъ» լրագրում, և այն հանգամանքը, որ հոգաբարձութիւնն ևս իր նամակ-բացատրութեան մէջ լռութեան է տալիս Կ. Գասպարեանի դէմ եղած մեղադրանքի կէտը, և այժմ ևս արձակել է նրան պաշտօնից,—այդ բոլորը առիթ է տալիս պահանջ դնելու հոգաբարձութեանը, հասարակական յուզեալ խիղճը հանգստացնելու համար, բացատրել, թէ որքան մեղսակից է, կամ ոչ, կառավարիչ Կ. Գասպարեանը դպրոցում կատարված զեղծումներին։

◆ Թիֆլիսի պօլիտեխնիկումը, ինչպէս յայտնի է, որոշված է բանալ Նաւթլուղում, ուր և քաղաքը որոնում է յարմար հողաբաժին։ Այժմ մի քանի կապիտալիստներ մտադիր են Նաւթլուղում ձեռք բերել ընդարձակ հողաբաժիններ և դրանց վրա կառուցանել էժան հանրակացարաններ բնակութեան համար։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը 200 ր. յատկացրեց միանուագ Թիֆլիսի երաժշտասէրների ընկերութեանը։

◆ Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլխի ընտրութիւնը կայանալու է այս տարվայ դեկտեմբերին։

◆ Վաճառականների աւագ Ա. Միլօվը նախազգուշացնում է Թիֆլիսի մասնաւոր բանկերին և վաճառականներին, որ Ուֆայում երևացել են գործածութեան մէջ կեղծ 500 րուբլանոցներ 1898 թ. ընդ սէրիաների А. С. № 066915, А. П. № 075603 և Л. П. 075624.

◆ Մայրաքաղաքի թերթերի ասելով, հանգուցեալ Ալ. Մանթաշեանի ժառանգներից մինը Պետերբուրգում ձեռք է բերել 2 տարեկան արշաւող ձի անհաւատալի գումարով՝ 75,000 րուբլով։ Այդ առիթով մի ռուս թերթ այն նկատողութիւնն է անում, թէ որքան մեծ օգուտ կը բերէր այդ խոշոր գումարը Թիֆլիսի պօլիտեխնիկումին, եթէ Մանթաշեանը նուիրէր նրան, փոխանակ մի ձի գնելու, որ գուցէ չար բաղդից կարող է մի գեղեցիկ օր մահանալ....

◆ Նոր-Բայազէտից մեզ գրում են հոկտ. 2-ից. «Սեպտ. 29-ի լոյս 30-ի գիշերը, ժ. մօտ 12 ին, սաստիկ ստորերկրեայ ցնցում տեղի ունեցաւ, որի հարուածը հիւսիսից հարաւ անցաւ՝ մեծ շարժում առաջացնելով։ Մի այսպիսի զօրեղ երկրաշարժ մեզանում երբէք չէր պատահել։ Շատերը խոր քնից զարթնելով ճրագներ վառեցին և վախենալով դուրս թռան բնակարաններից։ Սակայն, բարեբաղդաբար, ոչ մի վնաս չը պատահեց ոչ ոքի, միայն շարժվեցին կարասիներ, մահճակալներ և այլ իրեր՝ մեծ հնչիւն առաջ բերելով։ Ժողովուրդը զանազան մեկնութիւններ տեղիք է տալիս երկրաշարժի մասին»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 1 հոկտեմբերի

Ներսիսեան դպրոցի նախկին գանձապահ Սողոմոն Ալիխանեանի կատարած վատնման առիթով «Մշակի» № 208-ում լոյս տեսաւ մի յօդուած «Ներսիսեան դպրոցի նոր դէպքը» վերնագրով, որ հետևեալ օրն արձագանք գտաւ և «Тифл. Листокъ» լրագրում։

Արձանագրելով զեղծման փաստը, «Մշակը» հնարաւոր է գտել նախ՝ հոգաբարձութեանը մեղադրել նրանում, որ երբ թէ նա կատարված յանցանքը լռութեան էր մատնել, գոնէ մինչև յիշեալ յօդուածի լոյս տեսնելը, առաջնորդվելով այն տեսակէտով որ «կեղտոտ լուացքը դուրս չը պիտի տանել», և երկրորդ՝ օգտվելով հանգամանքից, վերագրանել 130,000 րուբլու դեֆիցիտը, որ գոյացել է իբր թէ շնորհիւ «իւրայինների» պաշտօն տալու տենչի։

Թողնելով հասարակութեան դատաստանին «Մշակի» յօդուածագրի այն գնահատումը, որ նա տալիս է հոգաբարձութեանս գործունէութեան, հոգաբարձութիւնս խնդրում է ձեզ տպագրել հետևեալ փաստային բացատրութիւնը։

Գանձապահ Ալիխանեանի վատնումը պարզվելուն պէս հոգաբարձութիւնս անմիջապէս դիմեց նախնական քննութեան և գանձարանի ստուգման, որից յետոյ անյապաղ, այն է սեպտեմբերի 19-ին, հաղորդեց կատարած յանցանքի մասին նահանգական դատարանի դատախազին, այնպէս որ սեպտեմբերի 21-ին, երբ «Մշակի» յօդուածագիրը «մամուլի մերկացնող պարտքը կատարած լինելու համար» գրում էր իր յիշեալ յօդուածը, դպրոցիս գանձապահի վատնումը դարձել էր ոչ միայն հասարակութեան այլ և դատարանական իշխանութեան սեփականութիւն և գաղտնիք էր գուցէ միայն պարոն յօդուածագրի համար։ 130,000 րուբլու դեֆիցիտը, որ ըստ «Մշակի» յօդուածագրի առաջ է եկել «իւրայիններին» պաշտօններ տալու տենչից, գոյացել է 1903 թից, սկսած մի շարք տարիների ընթացքում, երբ կալուածների գրաւման, 1905—1906 թւականների յայտնի դէպքերի, հասարակական աղէտների, դպրոցի նոր բաժանմունքներ բանալու և, որ գլխաւորն է՝ դպրոցի նոր շէնքերի կառուցման և հողաբաժինների գնման շնորհիւ. իբր ժամանակին հոգաբարձութիւնը հոգևոր իշխանութեան գիտութեամբ ստիպված էր դուրս գալ նախահաշուի սովորական սահմաններից այն յոյսով, որ ապագայում լրացնի այդ պակասը։ Յամենայն դէպս այդ դեֆիցիտը 1907—1908 թւականներից սկսած հոգաբարձութիւնը միշտ ներկայացրել է իր բացատրութիւններով հանդերձ թէ հոգևոր իշխանութեան, յանձին հանգուցեալ Իզմիրլեան կաթողիկոսի, և թէ պատգամաւորական ժողովներին, որոնք վաւերացրել են դպրոցիս հաշիւներն ու տեղեկագրերը և յայտնել հոգաբարձութեանս իրանց վստահութիւնը։

Դեֆիցիտի վերաբերմամբ մանրամասնութիւնները հոգաբարձութիւնը կը տայ առաջիկայ պատգամաւորական ժողովին, որ կայանալու է նոյեմբերի 18-ին։

Հերթապահ հոգաբարձու՝ Ն. Տիգրանեան
Գործավար՝ Գ. Աստուածատրեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մայրաքաղաքում խօսում են, որ բացի արտաքին գործերի մինիստրից՝ հրաժարվելու է ժող. լուս. մինիստր Կասսօն, որին փոխարինելու է ուսանողներից սիրված պրօֆ. Լազօրիօն։

◆ «Н. Вр.»-ն հերքում է Սազօնօվի հրաժարականի լուրը։

◆ Շարունակում են խօսել արդարադատութեան մինիստր Շչէգլօվիտօվի հրաժարականի մասին։

◆ Կոմս Վիտտէն Բիարիցից «Р. Сл.»-ի թղթակցի հարցին արտաքին գործերի մինիստր դառնալու լուրերի առիթով հակիրճ հեռագրեց. «Ce sont des inventions. Comte Witte» (Այդ ամենը յերիւրանք է. կոմս Վիտտէ)։

◆ Միտրօպօլիտ Անտօնին Կովկասից վերադառնալուց յետոյ Պետերբուրգում հիւանդացել է ինֆլուէնցիայով։

◆ «Н. Вр.»-ն հաղորդում է, որ հոկտ. 4-ին Պետերբուրգում, կոմս Վօրօնցօվ-Դաշկօֆների եկեղեցում, կայացաւ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվի թոռ Ս. Ի. Վօրօնցօվա-Դաշկօվայի պսակը պալատական գնդի կօրնէտ իշխ. Վ. Լ. Վեազէմսկիի հետ։ Հիւրերի թւում գտնվում էին կոմս Իլլարիօն Իվանօվիչը կնոջ հետ, Պետական Խորհրդի անդամ իշխ. Օբօլենսկին, գեն.-ադ. բարօն Մէյենդօրֆը, կոմս Տօլստօյը և կոմս Ֆերզէն։ Միևնոյն օրը նորապսակները մեկնեցին Տամբօվի կալուածքը։

◆ Պետերբուրգի դիպլօմատիական շրջաններում, «Рѣчь»-ի ասելով, լուր է տարածվել, թէ առաջիկայ գարնանը Եւրոպա է գալու եապօնական նոր միկադօն, որ այցելելու է մեծ պետութիւնների պալատները։ Միկադօյի այդ ճանապարհորդութեանը տրվում է առանձին նշանակութիւն, ի նկատի ունենալով որ մինչև օրս եապօնական կայսրները չեն դուրս եկել իրանց պետութեան սահմաններից։

◆ Ռուսաստանը ճանաչեց Մօնղօլիայի անկախութիւնը։

◆ Պետերբուրգումն է բօլգարական ներքին գործերի մինիստր Լիւդսկանօվը։

◆ Ներկայումս Եւրոպայում գտնվող պարսկական խնամակալ Նասր ուլ-Միւլքը հրաժարվեց մէկ անգամ ընդ միշտ խնամակալութեան պաշտօնից։ Անգլիան և Ռուսաստանը կողմնակից են այդ պաշտօնում նշանակել էկս-շահի ժամանակ արտաքին գործերի մինիստրի պարտականութիւնները կատարող Ասադ-ուդ-Դօվլէին։

◆ Բալմօրալում Սազօնօվը և Գրէյը համաձայնել են նաև անդրպարսկական երկաթուղու նախագծի առիթով։ Համաձայնութեանը յարվել է նաև Ֆրանսիան։

◆ Թէհրանում իրարանցում է Սալար-ուդ-Դօվլէի արշաւանքի լուրերից։ Ոստիկանական մասը յանձնված է Եփրեմի լէյտենանտ՝ հայազգի Գրիշային։

◆ Պետերբուրգի նահանգական դատարանը որոշեց ոչնչացնել Արցիբաշէվի պատմուածքների ժողովածուն, որի մէջ են «Գիւղացին և պարոնը» «Յեղափոխականը»։

◆ Բագուի նահանգապետը իր ամենահպատակ զեկուցագրի մէջ ուշադրութիւն է հրաւիրում Մուղանի դաշտի ոռոգման վրա։ Նահանգապետը մատնանշում է, որ նոր Արաքսի արհեստական ափեր ստեղծելու համար արդէն բաց է թողնված մօտ 4 միլիօն րուբլի։ Սակայն անհրաժեշտ է գումարայատկացումները շարունակել։ Նահանգապետի յարուցած հարցը քննվեց մինիստրների խորհրդի նիստում։ Ներկայումս այդ առիթով մինիստրների խորհրդին ներկայացված են ճան. հաղ. մինիստրի և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի եզրակացութիւնները։

◆ 4-րդ Պետական Դումայում Ֆինլանդիան ևս ունենալու է ներկայացուցիչներ, համաձայն 1910 թ. յունիսի 17-ի օրէնքի։ Մայրաքաղաքի թերթերի ասելով, այն դէպքում, եթէ ֆինները հրաժարվեն մասնակցել Դումայի ընտրութիւններին, ռուսաց կառավարութիւնը ձեռք չէ առնելու խիստ միջոցներ, օրինակ սէյմը արձակել և այլն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

6 հոկտեմբերի

ԲՐԻՒՍԵԼ։ Նոյեմբ. 26-ին գումարվում է միջազգային շաքարի կօնվէնցիայի մասնաժողովը։

ԵԱԼՏԱ։ Ծխախոտի գործարանատէրերի սինդիկատի պատճառով Ղրիմի հարաւային ափում ծխախոտի արդիւնաբերութիւնը շատ ծանր վիճակումն է գտնվում։ Որոշված է կռիւ մղել սինդիկատի դէմ։

ԲԵՆԻՑԻԱ (Կալիֆօրնիայի նահ.)։ Հրդեհը ոչնչացրեց զինուորական զինապահեստի գլխաւոր դէպօն։ Վնասը հաւասարվում է 4 միլիօնի։

7 հոկտեմբերի

ԿԱՇԳԱՐ։ Պէկինից ստացված պատուէրի համաձայն, Սինցիանի նահանգի զօրահրամանատար գեներալ Ցզեաօն ներողութիւն է խնդրելու ռուսաց կառավարութիւնից ռուսահպատակների ջարդի համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեցին „Наша Заря“, „Пет. Листокъ“, „Веч. Вр.“, „Лучъ“ թերթերի համարները։ Խմբագիրները ենթարկվում են պատասխանատուութեան։

ՑԱՐԻՑԻՆ։ Ալէքսէյ եպիսկոպոսը յայտնեց իլիօդօրականների պատգամաւորութեան, որ վանքում անկարգութիւնների շարունակութիւնը ի նկատի ունենալով նա հաստատ վճռել է վանքը փոխել կանանց մենաստանի կամ թէ ընդմիշտ փակել.

ԳԻՆԳԻՆ։ Զինուորական օդագնաց Բէյաբարը ընկաւ մի մարդու հետ. երկուսն էլ սպանվեցին։

ՄՕՍԿՎԱ։ Գրաւվեցին „Русск. Вѣд.“-ի և „Церковь“-ի համարները։ Երկուսի խմբագիրներն էլ ենթարկվում են պատասխանատուութեան։

Զինուոր Բակուրինը, որ Խօդինի դաշտում դուրս վազեց իր զօրախմբի կազմից Բարձրագոյն խնդրագիր ներկայացնելու մտադրութեամբ, յանձնվեց զինուորա-նահանգական դատարանին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեղեցկութիւնը բարձր կատարելութեան է հասած

№4711 ՎԱՐԴԻ ԲՈՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ

երեսի կաշուն և գոյնին տալիս է այն քնքշութիւնը, հարթութիւնը և առաձգականութիւնը, որոնք համարվում են ամենաբարձր գեղեցկութեան իսկական նշանները։ Կտորը 25 կօպ.։ Կայ ամենուրեք։

Ֆերդ. Միւլհենս պարֆիւմէրիա № 4711

Կէօլն-Ռէյնի վրա։ Ռիգա։ Հիմնված 1792 թ.։

PARFUMERIE
№4711
F.MÜLHENS

(М. 309206/309233) 10—4

ԲՈՒԺԱՐԱՆ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով
ՓՈԽԱԴՐՎԵԼ Է ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ

Միխայլօվսկի պր. № 49, և անկիւն Բէուտօվսկի փողոցի № 2. Տելէֆօն № 10—26.

Հիւանդների ընդունելութիւնը.

Աղաջանեան Միքայէլ.—միզասեռ., սիֆիլիս և կաշուի հիւ., ժ. 11—12-ը։
Վնուկով Վ. Վ.—խիրուրգ. հիւ., ժ. 1—2-ը։
Եղիազարեան Ի. Ն.—ներքին, ջղային և հոգեկան հիւ., էլեկտրոտէրապիա, ժ. 11—12-ը։
Եղիեվ Մ. Ռ.—ականջի, քթի և կոկորդի հիւ., ժ. 12—1-ը։
Նիմօեւ Մ. Պ.—խիրուրգ. հիւ., ժ. 11—12-ը։
Մաղաքեան Գ. Ն.—ներքին և երեխ. հիւ., առանձնապէս որովայնա-աղիքային, ժ. 11½—12½-ը։
Տամաս Ի. Ի.—խիրուրգ. հիւ., ժ. 12—1-ը։
Աւալօվա Ս. Ս.—ատամի հիւանդութիւններ, ժ. 9½—11½-ը։

Բուժարանում կատարվում է էլեկտր. բժշկութիւն և մասսաժ։ Միկրոսկոպ., բակտէրիօլոգ. և քիմիակ. հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստումն։ Ստնդուների քննութիւն։ Խորհրդի վճարը 50 կօպ.։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր պալատից և թէ առանձին նօմէրներից։

ՄՐՍԿՈՒՄՆ «914»-ի և «606»-ի։

(ե. հ. կ.) 706. 100—8

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տելէֆօն № 1175.

(ա.օ) 377. 100—23

600 ԱՌԱՐԿԱՆԵՐ
3 ՌՈՒԲԼԻ 90 կօպ.
փոխանակ 25 ռուբ.

Մեր ֆիրմայի հետ ծանօթանալու համար մենք ուղարկ. ենք միայն այս լրագրի ընթերցողներին 600 հատ օգտ. և արժէք. առարկ., որոնցից գլխաւորն է՝ գրպ. անկեր ժամաց. 10 տ. երաշխիքով, ոսկէ դուբլէ-շղթայ, տղամ. և կան. ոսկէ դուբլէ մատանիներ ամերիկ. ադամանդով, նոյն յատկութ. ապարանջան, մանեակ և ականջօղեր (200 ր. արժէք ունեցողից չը զանազանվող), կաշուէ դեղ. պօրտմօնէ, նէսէսէր և 500-ից աւելի հետաքրք. օգտ. առարկ.։ Բոլոր 600 առարկ. համար վերցնում ենք միայն 3 ր. 90 կ. (ժամաց. առանձին արժէ 6 ր.)։ Վերադիր վճ. ուղարկ. համար ճանապարհածախք հաշւվում է՝ 1—3 գաւառն. համար 55 կ., Սիբիր՝ 95 կ.։ Չը հաւանած դէպքում յետ ենք վերցնում և փողը վերադարձնում։ О-во „МЕРКУРІЙ“, ЛОДЗЬ. Л. 61.

(Л. 11649) 6—1

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Լ. ՏՕԼՍՏՕՅԻ հետևեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուրխաթեանի . . . . 30 կ.
2) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստօյի, կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի 7 կ.
3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստօյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . 5 կ.
4) ՔՈՅՐԵՐԸ, թարգ. Լ. Դանիէլեանի 5 կ.
5) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . 10 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.

(2) 10—4

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿ.
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և ուղարկվեց բոլոր բաժանորդներին
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 3 գիրքը
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
«ԱՍՏԾՈՒ ԿՐԱԿԸ»

Հատով գինն է 15 կ.։ Դիմել Թիֆլիսի բոլոր գրավաճառներին և Ընկ. գաւառական աշխատակից անդամներին ու գործակալներին։ Պահեստը Ընկերութեան մօտ։ Դիմել՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское О-во. Бебутовская 25.

(ե.) 753. 2—2

Եղբ. Աւսարգիսօվների

այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալոգներն ուղարկում են ՁՐԻ։

Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.

(ե.հ.կ.) 739. 10—3

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

(ե. հ. կ.) 555. 0—28

ԲԱԳՈՒ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Հ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ
(Մօլօկանեան այգու դիմաց, Գօգօլէվսկայա փ. № 6)

Նոր աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 27-ից։
Ուսման սկիզբը սեպտեմբ. 3-ից։ Խնդիրները ընդունվում են ամեն օր՝ առ. ժ. 9—1-ը և երեկ. ժ. 5—6-ը։
Ուսումնարանի դասընթացքն անցնելու հետ միաժամանակ երեխաները պատրաստվում են գիմնազի, ռէալական և առևտրական դպրոցներ մտնելու համար։

(շ. ե.) 737. 3—3

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
Առևտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մեթօդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ,

ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Ճեպողական դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24—4.

(ա.օ.) 643. 0—29

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный